

ԿՈՉ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Հրապարակ է գրւած հայ տպագրութեան 400 ամեայ և գրոց գիւտի 1500 ամեայ յորելեանը տօնելու հարցը, որու շուրջը մամուլի մէջ յայտնւեցան զանազան կարծիքներ և եղան ձեռնարկներ ալ:

Այս տարեդարձներու նշանակութիւնը մեծ է հայ պատմութեան մէջ. Հայ ազգը ժամանակակից՝ աշխարհի հնագոյն և նոյն իսկ իբմէ աւելի զօրեղ ազգերու—որոնցմէ շատերը անհետացել են պատմութեան թատերաբեմէն—իբ գոյութիւնը արեան մըրիկ-

ներու և հալածանքներու մէջէն շարունակէ, շնորհիւ իր մտաւոր բարոյական ուժերուն, որոց մէջ իր ազային սեփական գիրերու գոյութիւն իր աւագ տեղն ունի: Նա եթէ կապի. դարուն մէջ իբր՝ քաղաքակիր ազգ ադոր պատճառներէն մէկն է նա իր գրականութիւնը՝ տպագրական տպերով, որոց ծանօթացած է 400 տարիէ ի վեր:

Այսպիսի դարապուրիներ, քաղաքակիրթ ազգերու համար չեն անցնաւոյց համազգային տօներու և յաւերժական օգտակար ձեռնարկութեանց:

Ազգերու կեանքին մէջ՝ այսպիսի մեծ օրեր, մտաւոր կուլտուրական ստեղծագործութեան շրջաններ, ապագայ փառահեղ ծնունդներու երկուն պահեր են, որոնց հանդէպ անտարբեր չի կրնար մնալ՝ ինքզինք և ցեղը յարգող ուէ զարգացած անհատը հորիզոնի տակ ալ բնակի, որ կուսակցութեան և դաւանումի ալ պակասի:

Վասպուրական Արժւոյն լեռնաբեր Վարազայ ստորոտէն, ուր կէս դար առաջ, Հայաստանի մէջ առաջին անգամ կշարժէր տպագրական մամուլ մեծ հարեանուէր Հայրիկի ձեռքով--այսօր նա անդարանիկ ալևոր մամուլին բերնահա Վասպ.ի քաղ. կուսակցութեան խմբակցութեանց, դպրոցներու, մալոյ ներկայացուցիչներու և գրական հաստներու խորհրդակցական ժողով ձեզի կը բերէ իր ջերմագին իղձը, հայ եղբայրներ, ամեն երկիրներու դաւանութեան կառաջարկէ որ ատարեգարձը համազգային բնոյթ ունենայ, և այս առթիւ կազմել գրական ընդհանուր ֆոնդ մը, հայ գրականութեան սատարելու: Թէ ինչպէս պիտի մատակարարուի ֆոնդը՝ այդ մասկարելի է կազմել մանրամասն ծրագիր՝ ձեռնհաս մարմնի միջոցաւ:

Գրականութեան քաջակերութիւնը դպրոցի հետ՝ ամենէն հաստատուն հուժկու քայլն է մեր մտաւորական առաջադիմական տեսակէտով: Մեր մտադանդներ և հանճարներ՝ սնունդ լոյս չգտնելուն՝ իրենց խանձարուրդ մէջ կը խամրին. գրագէտներ գեթ մարդկային ճիգով և նահատակութեամբ կը վարեն իրենց կեանքը, յաճախ ակամայ ամուլութեան դատապարտած եթէ այլ միջոց չունեն արուստի, և այս կողմնակի միջոցներ միշտ կը կոտորակեն իրենց գրական արտադրութեան քանակն ու որակը: Շատ գրողներ դասալիք կը լլան, ոման կը դառնան գրչի խանութպան, և այլ և այլն:

Ահա այսքան անմխիթար է մեր մէջ գրական ասպարէզը, և որով մէջ այս պատճառով ալ շատեր չեն ուզեր մըտնել ու զոհել, և մենք յաճախ գրական տաղանդներ ու գոհար արդիւնքներ կը կորսնցնենք: Դրեթէ չունին միմիայն գրականութեամբ ապրող զոյգ մը գրագէտներ, կամ գրագէտներու դասմը, ոչ ակումբ և ոչ կաճակ մը ունենք, ամեն ինչ պատահական է մեր մէջ:

Գրական ընդհ. ֆոնդը մեզ կառաջնորդէ գրական նոր Ոսկեդարու մը լուսավառ արշալոյսին: Այդ կըլլա լաւագոյն գնահատութիւնը՝ մեր ազգային պարծանքներուն, ու հզօր ճիգմը մեր ազգի գրական ապագային ի նը պատու ներուժ կապ մը՝ Արևելեան և Արևմտեան գրական միութեան. կենդանի փանթէոնմը՝ մեր գրչի ու մտքի անմահներուն, բոլորովին տարբեր՝ յետ մահու մեր կատարած այնքան փառաւոր քայց վերաւորիչ թաղում-պսակներէ, դամբան-արձաններէ:

Վասպուրականը կոչ կընէ հայ ազգի ամեն դասակարգերուն, ժողովրդի բարձրագոյն զգացումներուն և զոհողութեան ոգիին, կատարելու համազգային հանգանակութիւն՝ ի նպաստ գրական ֆոնդի:

Ցուցնենք որ այսպիսի գաղափարի մը իրականացումը կանխահաս չէ մեր իրականութեան մէջ, և դէպի այն մեր ձգտումը սոսկ բարի ցանկութիւն չի մնար:

Աոյն գրական ընդհ. ֆոնդին գործնականացումը ու կազմակերպութիւնը կը ակնկալենք Ն. Ս. Օժութիւն Ամենայն Հայոց Ս. Հայրապետին և Պօլսոյ Ամեն. Ս. Պատրիարք Հօրմէն, որոց նոյնպէս ներկայացուցիչը սոյնի մաստ բաղձանքի գիրեր:

Կազմենք համազգային գրական ֆոնդ՝ հայ տպագրութեան և գրող գիւտի միացեալ բարեդէպ Յորելեանին առիթով:

Դիւան մնայուն յանձնախմբի Տէպագրութեան Յորելեանի՝
Նախագահ Յովսէփ Եպիսկոպոս
Ատենապետ Զիթունի
Ատենադպիր Խ. Լեոնեան